

ՏԵՔՍՏԻ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

ՍԻՐԱՆՈՒՇ ՀՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ

Մարդկային լեզուն նշանային համակարգ է, որի ամենամեծ նշանը տեքստն է: «Տեքստը լեզվական միավոր է» արտահայտությունը լեզվաբանության մեջ կարծես թե միակն է, որը տարակարծությունների ու վեճերի առիթ չի տալիս: Լեզվաբանությունը համեմատաբար ուշ է սկսել լրջորեն զբաղվել այս միավորի քննությամբ, և միանշանակ սահմանում դեռևս չի տրվել: Մեկը կարծում է, որ «տեքստը խոսքի կազմակերպման բարձրագույն միավորն է»¹, մեկ ուրիշը համոզված է, որ տեքստը խոսողության ընթացքի մի հատվածն է², և սա իհարկե հետաքրքիր, բայց մի տեսակ թերի գաղափար է: Տեքստը համարվում է նաև մի այնպիսի միավոր, որը լսելի կամ տեսանելի է և ուղեկցվում է իմաստով³:

Գ. Ջահուկյանը տեքստը անվանում է «հենք» և առաջարկում է գործածության մեջ դնել նաև «հինույթ» և «լիահինույթ» եզրաբառերը, որոնցից առաջինը «համապատասխանում է պարբերությանը լայն իմաստով և հանդես է գալիս որպես տեքստի նվազագույն միավոր, իսկ լիահինույթը նշանակում է հինույթի կամ հինույթների մեկ միասնական ամբողջությունը, որ հանդես է գալիս որպես ավարտուն տեքստ»⁴:

«Տեքստ» ասելով՝ հիմնականում հասկանում ենք գրականության ինչ-որ հատված՝ որևէ ստեղծագործություն կամ ստեղծագործության մի մաս: Գուցե այս է պատճառը, որ թվում է, թե տեքստը համեմատաբար ուշ ձևավորված նշան է: Տեքստը, սակայն, առաջացել է մոտավորապես այն պահին, երբ մարդն արտաբերել է առաջին ոչ թե անվանող, այլ ինչ-որ մեկին որևէ բան հաղորդող բառը կամ հնչյունը: Մարդու առաջին նախնին մեկ ուրիշին որևէ բան ասելու համար (ասենք՝ նրան վտանգի մասին զգուշացնելիս) պետք է որ ունենար արդեն ձևավորված ասելիք՝ գուցե ոչ թե բառերի, այլ պատկերների տեսքով, որ հնչյունի կամ հնչյունական կապակցության միջոցով հաղորդեր մյուսին: Այդ արտաբերվածն արդեն ոչ միայն բան էր անվանում, այլև միտք էր նշանակում և միտք հաղորդում: Եվ դա արդեն տեքստ էր, քանի որ տեքստը, ինչպես դեռ կտեսնենք, մտքերի հաջորդական ընթացքն է և այդ իսկ ընթացքի (որի միայն մի մասը կարող է լինել լսելի կամ տեսանելի) նշանակողը⁵: Ժամանակի ըն-

¹ Рахманкулова И. Проблемы лингвистики текста / Лингвистика текста, Куйбышев, 1976 с. 3.

² Стен Гальперин И. Текст как объект лингвистического исследования. М., 1981, էջ 9:

³ Այդպես են կարծում, օրինակ, Միրկինը, Սկալիչկան (Стен "Вопросы языкознания", М., 1976, № 2, էջ 86):

⁴ Գ. Ջահուկյան, Շարահյուսական ուսումնասիրություններ, Եր., 2003, էջ 63:

⁵ Այն, որ տեքստը մտքի նշանակողն է, պետք է որ բավարար լինի՝ կասկածի տակ չառնելու տեքստի անսահմանությունը, քանի որ մտքերի ընթացքը, ըստ էության, անսահման է: Մինչդեռ Գալպերինը անհիմն է համարում տեքստի այդ հատկանիշը (անսահմանությունը) և տեքստը բնութագրում է միակողմանի՝ «տեքստ» անվանելով գործընթացի միայն մեկ հատվածը: Տարօրինակ է, որ դրանից հետո նույն միավորը նա դիտում է որպես նախադասությունից մեծ այլ միավորներից՝ նախադասությունների շարքը համախմբող միասնություններից բաղադրված առարկա (տես Գալպերին И., նշվ. աշխ., էջ 67):

թացքում, կապված ճանաչողության հետ, մարդը սկսեց ավելի բարդ մտածել, մտքի նշանակողը պարզագույն հնչյունից վերածվեց բարդ կառուցվածք ունեցող միավորի:

Հաղորդակցման ժամանակ մտքերի մի մասը մնում է լուռ, «թաքնված», և դրանց միայն որոշ մասն է արտահայտվում: Սակայն մտքի այսպես ասած «կատարյալ» օրինակ գործնականում անհնար է բերել, և Ֆրեգեի «խոստովանությունը» տեղին է. «Ես չեմ կարող իմ ընթերցողների ձեռքը տալ միտքն ու խնդրել այն լավ դիտարկել բոլոր կողմերից: Ես նրանց պետք է տամ ըստ էության ոչ նյութական մի բան, որ պետք է ներկայացնեն նյութական թաղանթով: Լեզվի պատկերայնությունը որոշ դժվարություններ է առաջացնում»⁶: Երբ մեկը մյուսին որևէ բան է ուզում ասել, արտահայտում է իր ասելիքի հնարավորինս ամփոփ, ամբողջական պատկերը, բայց ոչ այդ որևէ բանի վերաբերյալ իր մեջ եղած կամ առաջացող բոլոր մտքերը. նույնիսկ մեծ ցանկության դեպքում գործնականում հնարավոր չէ արտահայտել բոլոր մտքերը, քանի որ դրանցից մեկին միշտ հաջորդում է մյուսը, որ կարող է լինել հենց նախորդին վերաբերող վերլուծությունը: Այնուամենայնիվ, եթե նույնիսկ տեսականորեն փորձենք պատկերացնել բոլոր մտքերի արտահայտման վիճակ, ապա կստացվի պարզապես անվերջ խոսք (գրավոր կամ բանավոր): Մտքերի ընթացքի արտահայտված մասն ընկնում է երկու լուռ եզրերի միջև, դառնում մի բան, որ ավարտուն, ամբողջական տեսք ունի, բայց իրականում չունի սկիզբ և վերջ, որովհետև սկիզբն այդպես էլ կարող է մնալ խոսողի «գլխում», վերջը՝ ընկալողի: Լեզվական այս նշանը փաստորեն պետք է երկու իմաստով հասկանալ՝ տեքստ, որ է մտքերի անընդհատ շղթան՝ խոսողի բոլոր մտքերը՝ չարտահայտվածից մինչև արտահայտվածը⁷, և տեքստ՝ միայն օտարված հատվածը: Այս վերջինի՝ օտարված հատվածի միջոցով է իրականանում մարդկանց հաղորդակցումը:

Նշված երկրորդ իմաստով տեքստի երկու տեսակ առանձնացնենք՝ շարժուն և հարաբերականորեն անշարժ: Մի կողմից՝ շարժուն է այն տեքստը, որ պատասխան է ակնկալում, մյուս կողմից՝ ցանկացած տեքստ սկսում է շարժվել, երբ ընկալվում է մեկի կողմից, այսինքն՝ վերլուծվում է: Ընկալվող տեքստի վերաբերյալ ցանկացած վերլուծություն դրա շարունակություն ենք համարում: Ա. Վեժբիցկան ասում է. «Ընկալվող տեքստը գլխում «գրանցելիս» ընկալողը «նույն ժապավենի վրա» գրի է առնում նաև իր ավելացրած նախադասությունը: Հետևաբար լսողի գիտակցության մեջ «երկձայն տեքստ» է առաջանում: Դա կապակցված տեքստ չէ, այլ երկտեքստ»⁸: Այս միտքը պարզապես անընդունելի է. ցանկացած ընկալման ժամանակ մարդը կենտրոնանում է հատկապես տեղեկատվությունն ընդունելու վրա, այն ընդունելուց հետո միայն տեղի է ունենում վերլուծությունը՝ այն, ինչը Վեժբիցկան «սեփական նախադասության գրանցում» է անվանում: Ներկայումս մարդու մեջ այս

⁶ Кузнецов В. Герменевтика и гуманитарное познание. М., 1991, с. 93.

⁷ Եթե այդ արտահայտվածը մտքերի ընթացքի պայմանական ամբողջացում չէ՝ օրինակ՝ որևէ ստեղծագործություն, այլ մարդու մեջ կազմված, բայց ինչ-ինչ պատճառներով արտահայտություն չգտած մտքի՝ արտահայտություն գտած շարունակություն է՝ սրան գունարած նաև ընկալողի վերլուծությունը. «Եթե մեկը հասկանում է տվյալ արտահայտությունը, կարող է դրանից բխող եզրակացություններ անել» (Беллерт И. Об одном условии связности текста / Новое в зарубежной лингвистике. Вып. VIII. М., 1978, с. 172):

⁸ Вежицка А. Метатекст в тексте / Новое в зарубежной лингвистике. Вып. VIII, М., 1978, с. 403.


երկու գործընթացներն այնքան կարճ ժամանակամիջոցում են կատարվում, որ իսկապես հնարավոր է շփոթվել, եթե հաշվի չառնենք այն, որ ինչ-որ բանի վերաբերյալ որևէ միտք կարող է առաջանալ միայն, եթե այդ բանն արդեն ծանոթ է ասելիքը մինչև վերջ չլսած՝ հնարավոր չէ սեփականը «գրանցել դրա վերաբերյալ»։ Իհարկե, խոսքի յուրաքանչյուր բաղադրիչ անմիջապես իր առանձին վերլուծությունն է ստանում («վերլուծություն» ասելիս տվյալ դեպքում նկատի ունենք թեկուզ ստացված տպավորությունը), սակայն խոսքն այս դեպքում վերաբերում է ամբողջական տեքստին։ Վեժբիցկայի միտքը կարելի է մասամբ ընդունել, եթե նկատի ունենանք տեքստի բաղադրիչները։

Հարաբերականորեն անշարժ ենք համարում այն տեքստը, որ ունի գոնե պայմանականորեն տրված սկիզբ ու վերջ, և որի բովանդակությունն ու ձևն էլ կարելի է համարել ամբողջական։ Առանձնացնում ենք նաև հարաբերականորեն անշարժ տեքստի երկու տեսակ՝ «պարուրած» և «ճառագայթած»։ Պարուրած տեքստը նման է փակ օղակի, որի վրա նշված է մի կետ, բայց այդպես էլ անորոշ է՝ այդ կետը տվյալ շրջանագծի սկիզբն է, թե՞ վերջը։ Սա հնարավոր է և՛ ձևային, և՛ բովանդակային առումներով։ Ձևային առումով պարզ է՝ տեքստը, օրինակ, սկսվում և ավարտվում է նույն նախադասությամբ կամ սկսվում է նախադասության երկրորդ մասով և ավարտվում նույն նախադասության առաջին մասով։ Բովանդակային առումով պարուրած է այն տեքստը, որը ձևականորեն մնում է անավարտ, անորոշ, բայց ավարտը պարզ է դառնում սկզբի կամ վերնագրի շնորհիվ (օրինակ՝ Էդգար Պոյի «Շշի մեջ գտնված ձեռագիրը»)։ «ճառագայթած» կոչվածն այն տեքստն է, որ ունի պայմանականորեն սահմանված սկիզբ, բայց վերջ չկա, կիսատ է կարծես։ Սա նույնպես կարելի է երկու տեսակի բաժանել. մի դեպքում տեքստը իսկապես կիսատ է, իսկ մյուս դեպքում այն ավարտված է գիտակցվում, մինչդեռ բովանդակային առումով հնարավոր է շարունակել։ Ու. Էկոն տեքստի այս տեսակն անվանում է «բաց»։ «Կան ստեղծագործություններ, որ չնայած ֆիզիկական իմաստով ավարտված են, այնուամենայնիվ «բաց» են մնում ներքին հարաբերությունների առաջացման համար, որ լսողը կամ կարդացողը պետք է դրսևորի ընկալման ժամանակ»⁹։ Այդպիսին կարող ենք համարել գեղարվեստական ամեն մի ստեղծագործություն (միշտ էլ հնարավոր է շարունակել ցանկացած վեպ, վիպակ, պատմվածք և այլն)։

Մարդկային հաղորդակցումը տեղի է ունենում մի կողմից՝ շարժուն տեքստերի, մյուս կողմից՝ ճառագայթած և պարուրած տեքստերի միջոցով (գեղարվեստականից մինչև գիտական աշխատություններ)։ Շարժուն (պատասխան ակնկալող) տեքստ ասելիս պետք է պատկերացնել և՛ պարզագույն կառուցվածքով երկխոսությունը (հանպատրաստից հարց-պատասխանը), և՛ բարդ կառուցվածքով երկխոսությունը (պատրաստված հարց-պատասխանը, նամակները)։ «Պարուրած» և «ճառագայթած» տեքստերն էլ հաղորդակցման միջոցներ են, քանի որ յուրաքանչյուր գեղարվեստական կամ գիտական ստեղծագործություն ոչ այլ ինչ է, եթե ոչ որևէ բանի վերաբերյալ ինչ-որ մեկի մտքերի օտարում, որ կոչված է որևէ բան ցույց տալու կամ ասելու մեկին կամ ոմանց։ Այն, որպես կանոն, բազ-

⁹ Эко У. Открытое произведение. СПб., 2004, с. 61.

մաթիվ մտքերի հոսքի պայմանականորեն ամբողջացած պատկերն է, որ պետք է ծնունդ տա և տալիս է բազմաթիվ մտքերի հոսքի:



Առաջին դեպքում սլաքների (մտքերի) հոսքը հանգում է կենտրոնին (առաջանում է որևէ ստեղծագործություն), երկրորդ դեպքում՝ արդեն եղած ստեղծագործությունը մտքերի հոսք է առաջացնում: Սլաքները ցույց են տալիս, որ մտքերը միշտ տրամաբանորեն կապված են, մեկից մյուսն է բխում, մեկին հաջորդում է դրա իսկ շարունակությունը, լրացումը:

Տեքստը տեքստ է ծնում. յուրաքանչյուր տեքստ վերլուծվում է, և այդ վերլուծությունն էլ իր հերթին տեքստ է, որ կարող է լինել և՛ կախված այն տեքստի բովանդակությունից, որից առաջացել է, և՛ դրանից անկախ: Այդ վերլուծությունն էլ կարող է ծնել մեկ այլ վերլուծություն: Հնարավոր է նաև այդ մի քանի վերլուծությունները և դրանք առաջացրած տեքստերը միավորել՝ համարելով մեկ տեքստ, և հնարավոր է հակառակը՝ տեքստը բաժանել այնպիսի մասերի, որ անկախ կամ պայմանականորեն ավարտուն կթվան:

Տեքստը բաղադրող նվազագույն իմաստակիր միավորը բառն է: Տեքստի իմաստը կամ գաղափարը ամբողջանում է տեքստը բաղադրող բառերի իմաստների միջոցով: Շլայերմախերը գրական ստեղծագործության մասին գրում է, որ տեքստը պետք է հասկանալ ամբողջությամբ, լրիվ, որ կախված է այդ տեքստի հետ կապված գիտելիքներից՝ տեղեկություն հեղինակի կյանքի մասին, ստեղծագործությունը գրելու դրդապատճառները և այլն: Այս միտքը լիովին ընդունելի է նաև «շարքային» տեքստի դեպքում. տվյալ տեքստի հիմնական իմաստն ըմբռնելու համար պետք է այն օտարողի մասին ինչ-որ տեղեկություններ ունենալ՝ ով է ասողը, ինչու է ասում և այլն. հակառակ դեպքում կստացվի պարզագույն ընկալում ու վերլուծություն և ոչ այսպես ասած փոխըմբռնում: Այստեղ նշենք, որ տվյալ տեքստի իմաստը, ճիշտ է, ստացվում և հաղորդվում է այն կազմող բառերի իմաստների միջոցով, բայց յուրաքանչյուր բառ իր իմաստի շնորհիվ կարող է ծնունդ տալ բոլորովին այլ տեքստի, և կարող ենք ասել, որ մեկ տեքստը ներառում է այնքան տեքստ, որքան բառից բաղկացած է ինքը: Յուրաքանչյուր տեքստ բառ է, յուրաքանչյուր բառ տեքստ է. տեքստի ամբողջ բովանդակությունը կարելի է ամփոփել բնորոշ մեկ բառում: Այս սկզբունքով են սովորաբար ընտրվում վերնագրերը: Սրանք տեքստի իմաստի վրա կարող են մեծ ազդեցություն ունենալ (միևնույն տեքստը առանց վերնագրի կարդալիս կամ լսելիս հնարավոր է այլ վերլուծություն անել):

Տեքստը երբեք մեկ իմաստ չի ունենում: Այլ հարց է, որ դրա իմաստներից որևէ մեկը գլխավորն է լինում, մյուսները՝ ուղեկցող: Այլ խոսքով՝ տեքստը մի քանի տեղեկատվության կրող է, որոնցից յուրաքանչյուրն էլ կարող է դառնալ առաջնային (հաճախ պատահում է, որ ինչ-որ մեկի խոսքը այլ կերպ է ընկալվում, թեև այդ ինչ-որ մեկը այլ ասելիք է ունենում): Վերնագրից կախված՝ կարող է փոխվել գլխավոր իմաստը, վերնագրով կարող է որոշվել, թե որն է տվյալ տեքստի իմաստներից առաջնայինը, գլխավորը: Տեքստը միշտ «ասելիք» է ունենում. չի կարող լինել տեքստ, որ ինչ-որ տեղեկատվություն չպարունակի. սա հաստատվում է հենց միայն այն տրամաբանությամբ, որ հնարավոր չէ մի քանի իմաստի գումարից ստանալ անիմաստ, դատարկ ձև:

Այսպիսով, կարող ենք վերածնակերպել հայտնի սահմանումը և ասել, որ մարդկային հաղորդակցման հիմնական միջոցը հնչյունային լեզուն է, մասնավորապես՝ տեքստը, և որ այն լեզվական հնագույն միավոր է, ավելի հին, քան հնչյունը: Այս միավորն անընդհատ փոփոխվում է: Ժամանակի ընթացքում ի հայտ են գալիս տեքստի և՛ կառուցվածքով, և՛ բովանդակությամբ, և՛ գործառույթներով նախորդներից տարբերվող, ավելի բարդ տեսակներ: Ջարմանալի չէ, քանի որ տեքստը մարդկային մտքի ծնունդն ու խորհրդանշանն է և, համարձակվում ենք նշել, մարդկային հաղորդակցման անփոխարինելի միջոցը: Տեքստը կփոփոխվի այնքան և այնպես, որքան և ինչպես կփոփոխվեն մարդկային միտքն ու հարաբերությունները:

СИРАНУШ ОГАНЕСЯН – Текст как средство коммуникации. – В статье рассматривается текст – самая крупная и наиболее сложная единица языка. Текст представляется как единица, содержащая одновременно несколько пластов информации, благодаря чему осуществляется человеческое общение. Выделяются основные виды и основные функции текста. Делается вывод о том, что текст является древнейшей единицей языка как средства коммуникации.

SIRANUSH HOVHANNISYAN – The communicative value of text – The present paper considers the text, which is the largest and the most complicated linguistic unit. It is presented as a unit simultaneously containing several layers of information due to which human communication is actualized. The main types and functions of the text are distinguished. It is concluded that the text is the most ancient linguistic unit.